
**ՄԻ ԷՋ ՊՈԼՍԱՅԱՅ ԵՐԳԻԾԱԹԵՐԹԵՐԻ
ԲԱՆԱՎԵՃԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ**

L. Գ. ՍԻՍՈՆՅԱՆ

1860-80-ական թվականներին պոլսահայ շատ պարբերականներ, ելնելով տարբեր նկատառումներից, դիմում էին բանավեճի ժանրին: Բանավեճը հնարավորություն էր տալիս թե՛ բաց տեքստով ներկայացնել սեփական դիրքորոշումները, թե՛ ազատ արտահայտվել այլոց մասին: Այս կամ այն պարբերականին և նրա խըմբագրին մարտահրավեր նետելու «ամենաքաղաքակիրթ» տարբերակը լինելով՝ այն նաև թույլ էր տալիս հարցերի քննարկման մի հարթությունից տեղափոխվել բոլորովին այլ հարթություն՝ այդպիսով քողարկելով ծագած «հակամարտության» բուն, սկզբնական պատճառները, այն է՝ գաղափարական բևեռացումը, քաղաքական հայացքների և կողմնորոշումների տարբերությունը: Շատ օրաթերթերի և հանդեսների համար բանավեճը պարզապես պատրվակ էր նախահարձակ լինելու և «անհամակրելի» պարբերականին հարված հասցնելու համար: Ինչ վերաբերում է բանավեճի մեջ ակամա ներքաշվածներին, ապա նրանց համար էլ դա համարձակ հայտարարություններով հանդես գալու և իրենց վրա ուշադրություն հրավիրելու ևս մեկ հնարավորություն էր, ընդ որում՝ պատասխանողի իրավունքով:

Պոլսահայ պարբերականներից և ոչ մեկը մամուլի ներկայացուցիչների հետ այնքան չի բանավիճել, որքան «Մեղու» երգիծաթերթը: «Մեղու»-ի համար դա, թերևս, օրինաչափ էր, քանի որ այն մշտապես հետաքրքրվել է թե՛ գաղափարակից, թե՛ այլախոս թերթերի գործունեությամբ և ճակատագրով: Կ.Պոլսում լույս տեսնող թերթերի բացթողումներն ու թերությունները նկատելը, դրանց մասին բարձրաձայնելը, վերլուծելն ու մեկնաբանելը հանդեսը համարում էր իր ծրագրային քաղաքականության կարևոր գծերից մեկը: Արդյունքում «Մեղու»-ի հրապարակումները մի դեպքում վեր էին ածվում միակողմանի քննադատության, մյուս դեպքում՝ ազդարարում հերթական բանավեճի սկիզբը: Այդպես ծնվեցին «Մեղու»-«Երևակ», «Մեղու»-«Մասյաց աղավնի», «Մեղու»-«Մասիս», «Մեղու»-«Մամուլ» բանավեճերը: Ի դեպ, դրանց շրջանակներում բարձրացվել են տարաբնույթ հարցեր, շոշափվել են բազմաթիվ թեմաներ, որոնց շուրջ, սակայն, կողմերն այդպես էլ համաձայնության չեն եկել: Վերջիններիս կոշտ դիրքորոշումը, միմյանց նկատմամբ անհանդուրժողականությունը և ընդհանուր եզրեր գտնելու ցանկության բացակայությունը բանավեճերը հաճախ վեր են ածել բանակռիվների, դուրս բերել ժանրին բնորոշ կաղապարներից: Թեև բոլոր այն բանավեճերը, որոնցում «Մեղու»-ն հանդես է եկել իբրև բանավիճող կողմ, չեն կրկնում միմյանց իրենց առջև դրված խնդիրներով ու նպատակներով, սակայն դրանցում կրկնվում է «Մեղու»-ի խմբագրի՝ Հարություն Սվաճյանի մարտավարությունը: Այս առումով առանձնանում է «Մեղու»-«Մամուլ» բանավեճը, որը, ի թիվս այլ տարբերությունների, աչքի է ընկնում նաև «Մեղու»-ի նոր խմբագրի՝ Հակոբ Պարոնյանի ինքնատիպ ձեռագրով:

«Մեղու»-ի խմբագրի պաշտոնը ստանձնելու առաջին իսկ օրվանից Պարոնյանը որպես «թիրախ» ընտրեց «Մամուլ» երգիծական հանդեսը, որը 1869 թվականից հրատարակվում էր Գ. Այվազյանի խմբագրությամբ (պարբերականը տպագրվել է 1869-1883 թվականներին): Ինչպես «Մեղու»-ն, «Մամուլ»-ը ևս ծաղրել է պոլսահայ

կյանքի խոցելի կողմերը, հնացած ավանդույթներն ու բարքերը, նորօրյա անհեթեթ սովորույթներն ու հակումները, ստեղծել աշխույժ և կենդանի գրույցներ, կենցաղային վառ պատկերներ: Լինելով երգիծական հանդես՝ մշտապես իր տեսադաշտում է պահել նաև արևմտահայ կյանքի տարբեր կողմերը՝ Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, Արևմտյան Հայաստանի կացությունը, մշակութային կյանքի, դպրոցի, թատրոնի հետ կապված բազմաթիվ հարցեր: Իր էջերում «Մամուլ»-ը համարձակորեն քննադատել է ազգային և թուրքական իշխանություններին, երեսփոխաններին, գավառական հարստահարիչներին, տպագրել Մուշից, Վանից, Բաղեշից և այլ գավառներից ստացված նամակներ: Սակայն դա չի խանգարել, որ Պարոնյանը «Մամուլ»-ը դարձնի իր ծաղրի ու քննադատության մշտական «թիրախ»: Մտածել, որ երկու երգիծաթերթերի հակամարտությունն ուներ միայն քաղաքական ենթատեքստ, և որ վերջինիս առանցքը կազմում էին միայն գաղափարական հակասությունները, ինչն ակնհայտ է վերոհիշյալ մյուս բանավեճերի դեպքում, կարծում ենք, սխալ է: Գոնե այդ հանդեսների հրապարակումների քննությունը նման եզրակացության հանգեցնում առիթ չի ընձեռում: Ծանոթանալով խմբագիր-երգիծաբան Հ. Պարոնյանի գործունեությանը՝ վստահաբար կարող ենք ասել, որ պարբերականների միջև գոյություն ունեցող այլակարծությունը բանավեճի ծավալման միակ պատճառը լինել չէր կարող: Անշուշտ, չափավոր լիբերալ ուղղվածություն ունեցող հանդեսի և նրա խմբագրի շատ հայացքներ Պարոնյանի համար ընդունելի չէին, ինչի մասին նա բազմիցս գրել է իր հանդեսի էջերում, բայց, կարծում ենք, «Մամուլ»-ի մեջ «Մեղու»-ն տեսնում էր ոչ միայն գաղափարական հակառակորդի, այլև մրցակցի: Մինչև 1874 թվականը «Մամուլ»-ը և «Մեղու»-ն Կ.Պոլսում հրատարակվող միակ երգիծական հանդեսներն էին: Պոլսահայ երգիծական մամուլի ակունքներում կանգնած և երկար ժամանակ այդ ժանրում միակը համարվող պարբերականի համար առաջատարը և լավագույնը լինելու ցանկությունը բանավեճի մեջ մտնելու հիմնական պատճառներից մեկը կարելի է համարել: Ուստի, կարող ենք ասել, որ «Մեղու»-«Մամուլ» բանավեճը սաղմնավորվել է մրցակցային և գաղափարական պայքարի մթնոլորտում:

Ի դեպ, պատճառներից մեկն էլ, որի շուրջ «հյուսվել էր» երկու երգիծաթերթերի բանավեճը, պատրիարքի և նրա գործունեության վերաբերյալ հակադիր դիրքորոշումների առկայությունն էր: «Մամուլ»-ը բաց չէր թողնում Խրիմյանին գանակոծելու, իսկ «Մեղու»-ն՝ դրվատելու և պաշտպանելու հնարավորությունը: Խրիմյանի դեմ տրամադրված ազգային լրագիրների թիվը չէր սահմանափակվում միայն «Մամուլ»-ով: Կ.Պոլսում հրատարակվող մի շարք պարբերականների վերաբերմունքը ևս հեռու էր դրական լինելուց: Պարոնյանի կարծիքով՝ այդ պարբերականների՝ սրբազանին «գրպարտելու» և «սուտերու դիմելու» «մոլուցքը» հասնում էր ծայրահեղության, ու թեև նրա քննադատությունը չէր շրջանցում նման քաղաքականություն որդեգրած և ոչ մի պարբերականի, սակայն «Մամուլ»-ն արժանանում էր առանձնակի ուշադրության: «Մեղու»-ն հավանաբար չէր կարողանում հանդուրժել վերջինիս և նրա խմբագրի՝ Գ. Այվազյանի փոփոխական դիրքորոշումը պատրիարքի նկատմամբ: Եվ իսկապես, հանդեսի հրապարակումները փաստում են, որ այս հարցում այն իրեն դրսևորել է իբրև անսկզբունքային պարբերական: Դեռևս 1870 թվականին «Մամուլ»-ի համակրանքը Խրիմյանի հանդեպ ակնհայտ էր, և նա խորին հարգանքով և ակնածանքով գրում էր. «...իբրև ճշմարիտ Ավետարանի քարոզող, իբրև ճշմարիտ հովիվ և հայր ժողովրդյան կը խոսի նա բեմին վրայեն...»¹:

¹ «Մամուլ», Կ.Պոլիս, 1870, թիվ 122, էջ 141:

Մակայն շուտով Խրիմյանին դրվատող հոդվածների փոխարեն «Մամուլ»-ը հանդես է գալիս նրան պարսավող նյութերով: Երբեմնի «ճշմարիտ հովիվը» դառնում է պարբերականի երգիծական հերոսներից մեկը: Արդեն 1871թ. «Մամուլ»-ի համարներից մեկում կարդում ենք «Ս. Պատրիարքը ի՞նչ կընեն» հարցի պատասխանը. «Մեծերուն, պեյերուն, էֆենտիներուն տուները կը պտտի: Պեյերուն, էֆենտիներուն այմիշ կըլլա: Հին պարտուց համար հանգանակություն կընեն՝ հաշիվ չը տար: Առաջ Հայաստան կըսեր, հիմա ան ալ մոռցավ...»²:

Բանավեճը մեկնարկեց «Հարցման մը պատասխանը» հոդվածով, որը տպագրվեց «Մեղու»-ի 1872թ. 102-րդ համարում: Հեղինակն իր դժգոհությունն էր արտահայտել «Մամուլ»-ի էջերում տեղ գտած մի ծաղրանկարի կապակցությամբ, ուր պատրիարքը պատկերված էր ձեռք ու ոտքը կապկպված: Պահանջելով «Մամուլ»-ից մեկնաբանել այդ քայլը՝ «Մեղու»-ն հեզմանքով գրեց. «Հիմա շատերը մեզ կը հարցնեն թե ոտքերը կապված մարդ մը չկրնար գրել: Մեր պատասխանը աս է թե՛ Մամուլ շատ անգամ ոտքով կը գրե, Հայրիկն ալ յուր անձին վրա չափելով... Որչափ գեշ բան է ուրիշներն իր անձին վրա չափելը»³: Քննադատելով «Մեղու»-ն, այնուամենայնիվ, ավելորդ լրջություն չէր հաղորդել իր նյութին և հավատարիմ էր մնացել երգիծաբերթի սկզբունքներին:

Այվազյանն ընդունեց մարտահրավերը: Հանդեսի հաջորդ իսկ համարում նա մի քանի բառով անդրադարձավ հիշյալ հոդվածին, չնայած այդ անդրադարձում ծաղրանկարի վերաբերյալ ոչ մի մեկնաբանություն կամ բացատրություն չկար: «Այս խելացնոր պարոնը, կարդում ենք այստեղ, - յուր առաջին հրատարակութենեն սկսյալ, Մամուլ դեմ հարձակիլ կը փորձե, առանց գոնե Մամուլ մեկ ողջունին ալ սպասելու, և անցյալ շաբթվան մեկ թերթերնուս մեջ ձեռքն ու ոտքը կապված ծերունի մը ներկայացնող պատկերն առիթ բռնելով, ասպարեզ կիջնա, այն ալ խմբագրաց ավանակություն ընելեն սկսելով»⁴:

Բանավեճի սկիզբն ազդարարված էր: Կողմերին մնում էր ընտրել ճիշտ մարտավարություն: Հ. Պարոնյանի դեպքում այն հստակ էր. ամեն ինչին նայել երգիծաբանի աչքերով: Գ. Այվազյանը, սակայն, հենց սկզբից առաջնորդվեց «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքով: «Մամուլ»-ի խմբագրի նման տրամադրվածությունը բանավեճին հաղորդեց ավելորդ լրջություն՝ ստեղծելով լարվածության մթնոլորտ: Բանավեճի ընթացքում կողմերի մարտավարությունը որոշակիորեն փոփոխվեց, բայց պահպանվեցին դրանց միջև առկա էական տարբերությունները: Ժանրային այն բազմազանությունը և երգիծանքի զինանոցը, որ բանեցնում էր Հ. Պարոնյանը, Գ. Այվազյանի պայքարում գրեթե բացակայում էին: «Մեղու»-ին ուղղված «Մամուլ»-ի պատասխանները հիմնականում գրված են հոդվածի ժանրով: Երեք մասից բաղկացած «Շոշորդի-անոսին աղջիկտես» երգիծապատումը (1873թ., թիվ 344, 345, 346), թերևս, այլ ձևաչափով ներկայացված միակ նյութն է, որը, սակայն, որևէ ժանրի սահմաններում չի տեղավորվում:

Բանավեճի ընթացքում Պարոնյանի խնդիրն է եղել ստեղծել «Մամուլ»-ի և նրա խմբագրի երգիծական կերպարը, ինչին էլ ծառայեցրել է երգիծանքի այլևայլ տեսակները: Ավանակի կերպարը, ի դեմս Այվազյանի, «Մեղու»-ի էջերում դարձել է բազում երգիծական հոդվածների, մանրապատումների, պամֆլետների ու ֆելիետոնների նյութ: Այվազյանի առջև դրված է եղել միևնույն խնդիրը, բայց դա նրան

² «Ս. Պատրիարքը ի՞նչ կընեն», «Մամուլ», Կ. Պոլիս, 1871, թիվ 174, էջ 246:

³ «Հարցման մը պատասխանը», «Մեղու», Կ. Պոլիս, 1872, 8 նոյեմբերի, թիվ 102:

⁴ «Շոշորդ խմբագիրը», «Մամուլ», Կ. Պոլիս, 1872, թիվ 250, էջ 350:

մասամբ է հաջողվել լուծել: Պարոնյանին կնքելով «Շոշորդ» անվամբ և դրան ամեն անգամ կցելով տարբեր վերջավորություններ (Շոշորդիանոս, Շոշորդիկ, Շոշորդաբան) նա փորձել է ստեղծել «խելացնոր» խմբագրի կերպար, որը, սակայն, այնքան վառ, արտահայտիչ և ամբողջական չէ, որքան «Այվազի» կերպարը: Վերջինիս թերություններն ու ծիծաղելի կողմերը ներկայացնելու համար Պարոնյանից ոչինչ չի պահանջվել, քան պարզապես դրանք մատնանշելը, մինչդեռ Այվազյանն ավելի համոզիչ երևալու համար մշտապես հակադրություն է ստեղծում իր և «շոշորդ» խմբագրի միջև, նրա թերությունների ֆոնի վրա մատնացույց անում իր առավելություններն ու արժանիքները: Բնորոշ օրինակ է «Գարձեալ Շոշորդաբան» (1873 թ., թիվ 329) հոդվածը, ուր Այվազյանը մեկ առ մեկ թվում է «Մեղու»-ի և նրա խմբագրի գործած բոլոր «մեղքերը»՝ չմոռանալով յուրաքանչյուրից հետո նշել իր մարդասիրական և վեհանձն արարքներից մի քանիսը:

Խոսելով «Մեղու»-«Մամուլ» բանավեճի և կողմերի մարտավարության մասին՝ չենք կարող անտեսել մի հանգամանք ևս. իբրև բանավիճող կողմ՝ Պարոնյանի քայլերը ավելի հղկված և մտածված են, ինչի շնորհիվ նրա հարվածները գրեթե միշտ հասել են նպատակին: Օրինակ՝ Պարոնյանն իր հոդվածներում երբեք չի հակասել ինքն իրեն, «Մամուլ»-ի խմբագրին չի մեղադրել այնպիսի արարքներում, որոնցում կարող էին մեղադրել նաև իրեն: Ինչպես երևում է «Մեղու»-ի հրապարակումներից, Գ.Այվազյանին դա այնքան էլ չի հուզել: Այսպես, օրինակ, վերջինս, Պարոնյանից պահանջելով անտեղի չքննադատել ազգային թերթերը, հենց ինքն է հանդես եկել դրանց փնովողի դերում: Չկա «Մամուլ»-ի մեկ համար, որտեղ տեղ գտած չլինեն «Փունջ», «Օրագիր», «Մասիս» կամ «Մէտա» պարբերականները քննադատող հոդվածներ: Այս պարագայում անտրամաբանական է թվում երգիծաթերթի 310-րդ համարում տեղ գտած ոմն «Մեղուին ձանձրացողից» նամակը, որտեղ բերված են որոշ «սղաթիսթիք» տվյալներ այն մասին, թե «Մեղու»-ի մեկ համարում քանի անգամ են կրկնվում «Ասիա», «Մանգումէ» և «Օրագիր» պարբերականների անունները: Պարզվում է՝ Պարոնյանի հանդեսի 163-րդ համարում դրանք հիշատակվել են 500-ական անգամ:

Անդրադառնանք մեկ տարբերության ևս: Այն նույն ընթացքում, երբ «Մեղու»-ն բանավիճել է «Մամուլ»-ի հետ, հանդեսի էջերում քննության է առնվել նաև պոլսահայ մյուս պարբերականների ընթացքը: Յուրաքանչյուրի նկատմամբ ունենալով հստակ դիրքորոշում՝ Պարոնյանը դրանք չի նույնացրել և դիտարկել միևնույն հարթության վրա: Օրինակ՝ «Ասիա» քաղաքական և բանասիրական լրագիրն արժանացել է երգիծաթերթի ծաղրին իր էջերում տիրող խառնաշփոթի, անիմաստ և անհասկանալի հոդվածների, Օ. Խոճասարյանի «Օրագիր»-ը՝ անսկզբունքայնության համար, «Մասիս»-ը՝ մեկ այլ պատճառով: Իհարկե, չենք կարող պնդել, որ դրանց քննությունն անկողմնակալ է եղել, բայց կարևորը սկզբունքային տարբերությունն է, որն այս պարագայում ևս ակնհայտ է: Այնինչ «Մամուլ»-ը խտրություն չի դնում «հակառակ ճամբարում գտնվող» թերթերի միջև, բոլորին մեղադրում է միևնույն «մեղքերի» մեջ, անվանում «պնակալեզ» ու «անսկզբունքային»: Կարդալով «Մասիս»-ի, «Մէտա»-ի, «Փունջ»-ի կամ «Մեղու»-ի վերաբերյալ «Մամուլ»-ի հոդվածները՝ դրանցում էական տարբերություններ չենք տեսնում. յուրաքանչյուրում նույնն է ծաղրի, հեզմանքի, գայրույթի չափաբաժինը:

Սրանք այն հիմնական տարբերություններն են, որոնք երևան են գալիս երգիծաթերթերի հրապարակումների համեմատական քննության դեպքում:

Բանավեճի ընթացքում ստեղծվել են բազմաթիվ հետաքրքիր գործեր: Ուշագրավ են հատկապես Պարոնյանի կենդանի երկխոսությունները, մանրապատում-

ները, անեկդոտները: «Էշն ու Այվազը» «տրամախոսությունը»⁵, «Ընդհանուր ժողով Մեղուի»⁶, «Հիվանդ թերթը»⁷ երգիծական պատմվածքները Պարոնյանի՝ այս ժանրի առավել հաջողված ստեղծագործություններից են, որոնցում Այվազյանը ներկայացվել է իբրև լրագրության հետ առնչություն չունեցող մի «պատահականություն», ով լրագրությունից այնքան հեռու է, որքան ավանակը՝ «ճարտասանությունից»⁸:

Ընդհանրապես, Հ. Պարոնյանը Գ. Այվազյանին դասել է այն խմբագիրների շարքը, ովքեր չեն կարողացել իրենց պարբերականները վեր բարձրացնել ասեկոսների և գրպարտությունների մակարդակից: Մի հանգամանք, որը, ըստ նրա, չէր կարող չջնջել երկու խմբագիրների միջև հավասարության նշանը: Թերևս դա է պատճառը, որ «Մեղու»-ի խմբագիրը միշտ էլ որոշակի վերապահումով է մոտեցել երգիծաբան Այվազյանի հետ իր մրցակցությանը՝ ցույց տալով, որ ուժերը հավասար չեն: «Մեղու»-ի էջերում սպազրված բազմաթիվ երգիծական գործեր կարելի է ընդունել որպես ասվածի հիմնավորում: Նրանցում չենք գտնում այն լարվածությունն ու վիրավորանք հասցնելու անհագ ցանկությունը, որն առկա է «Մեղու»-ի դեմ գրված նյութերում: Հատկապես բանակռվի սկզբնական շրջանում Պարոնյանի հանդեսը «Մամուլ»-ի վիրավորանքներին պատասխանում էր երգիծական մանրապատումներով, ֆելիետոններով ու հողվածներով, ուր պիտակների և վիրավորական խոսքերի փոխարեն գերակշռում էր կծու ծաղրը՝ հաճախ մատուցված այլաբանորեն:

Այվազյանը ևս իր հողվածներում կասկածի տակ է առել Պարոնյանի՝ իբրև խմբագրի անկողմնակալությունը, ճշմարտախոսությունը, համարել նրան «տգետ» խմբագիր, պահանջել է իջնել երևակայական բարձունքից, «քանզի տգիտութեան առաջին նշանը ինքզինքը զիտուն կարծելն է»⁹: Գրանք թեև պարունակում են երգիծանքի և հումորի տարրեր, սակայն զիջում են «Մեղու»-ի նյութերին. չունեն ոճական, ժանրային, թեմատիկ բազմազանություն: Գրեթե չեն տարբերվում նաև վերնագրերը. յուրաքանչյուրում այլևայլ վերջավորություններով կրկնվում է «շոշոռո» բառը: Այս միօրինակությունը թուլացնում է «Մամուլ»-ի հարվածների ուժգնությունը: Փոխարենն ընդգծվում է երգիծաբան Պարոնյանի վարպետությունը. յուրաքանչյուր հաջորդ հրապարակում ոչ միայն չի կրկնում նախորդին, այլև ներկայանում է նոր ժանրի, ոճի մեջ, իսկ երգիծանքն ու հումորը մատուցվում են ավելի մեծ չափաբաժիններով: «Մեղու»-ի պատասխան հողվածներից մեկում, որը վերնագրված է «Լրագրական դիցաբանության Ապիսը»¹⁰, երևում է, թե որքան խայթող կարող է լինել Պարոնյանի երգիծանքը: «Երբ որ Մամուլը կը խոսի Մամլո դեմ կը հայհոյե» բնաբանից հասկանալի է դառնում, որ այս անգամ հեղինակը միայն հումորով ու թեթև ծաղրով չի սահմանափակվելու: Սրամիտ համեմատություններով ու խայթող մտքերով «Մեղու»-ն ծաղրում է Այվազյանին՝ աստիճան առ աստիճան իջեցնելով նրան խմբագրի պատվավոր բարձունքից: «Այվազը տեսնելուս պես իսկույն միտքս կուգա այն աղանդը, որ կընդունի թե մարդոց հոգիները անասուններու կը մտնեն...անասունոց ալ ստվերները մարդոց կը մտնեն...»¹¹, - կարդում ենք հողվածի սկզբում:

⁵ «Էշն ու Այվազը», «Մեղու», Կ.Պոլիս, 1872, 15 նոյեմբերի, թիվ 104:

⁶ «Ընդհանուր ժողով Մեղուի», «Մեղու», Կ.Պոլիս, 1872, 25 նոյեմբերի, թիվ 107:

⁷ «Հիվանդ թերթը», «Մեղու», Կ.Պոլիս, 1873, 17 հոկտեմբերի, թիվ 160:

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ «Շոշոռոքաբանին զառանցանքը», «Մամուլ», Կ.Պոլիս, 1873, 31 հոկտեմբերի, թիվ 331:

¹⁰ «Լրագրական դիցաբանության Ապիսը», «Մեղու», Կ.Պոլիս, 1872, 13 դեկտեմբերի, թիվ 112:

¹¹ Նույն տեղում:

«Մեղու»-ի այս հրապարակումն էլ անպատասխան չմնաց: Հակահարվածը հասցվեց «Շոշորդ խմբագիրը» անստորագիր հոդվածով¹²: «Մեղու»-ի խմբագրին անվանելով «ճիճու»՝ «Մամուլ»-ը սեփական մեկնաբանությամբ ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում Պարոնյանի կենսագրությունը: Դրան քիչ թե շատ ծանոթ մերօրյա ընթերցողը դժվար թե կարողանա այդ «շոշորդ պարոնի» տակ ճանաչել մեծն Պարոնյանին: Թեև Ա.Ա. Խառատյանի կարծիքով, մեր օրերի համար նույնիսկ Այվազյանի մեկնաբանությամբ Պարոնյանի մասին յուրաքանչյուր կենսագրական տեղեկություն կարևոր է¹³, այնուամենայնիվ կարծում ենք՝ «Մամուլ»-ի երգիծական հայելու մեջ արտացոլված իրողությունների աղճատված պատկերը կարող է արժեքավոր լինել միայն այնքանով, որքանով բացահայտում է «Մամուլ»-ի խմբագրի վերաբերմունքը Պարոնյանի նկատմամբ:

Երբեմն խմբագիրներին հոգնեցնում էր անվերջ թվացող մրցակցությունը, որից հրաժարվելը կնշանակեր ընդունել սեփական պարտությունը:

«Մեղու»-ի և «Մամուլ»-ի բանավեճը, որը ծավալվել էր զաղափարական հակասությունների ու մրցակցային պայքարի մթնոլորտում, աստիճանաբար վերաճեց խմբագիրների անձնական հակամարտության՝ ձեռք բերելով այլ որակներ: Կատակաբանություններն ու թեթև հումորը Պարոնյանի երգիծանքում տեղի տվեցին կծու և հատու ծաղրին, իսկ Այվազյանի հարձակումները դարձան ավելի կատաղի՝ շաղախվելով ցածր ոճի տարրերով: Ի դեմս Պարոնյանի տեսնելով ուժեղ հակառակորդի՝ Այվազյանը մշտապես խայթել ու ծաղրել է նրան, անվանել «շոշորդ», «ոջի», «ուղեղից տկար», «ողորմելի ճճու», իսկ նրա «մահտեսի» պարբերականը՝ «ցնդած ծերունի», «խեղճ կենդանի», որը «մաքրության դեմ աղտոտություն է քարոզում»: Իհարկե, ի պատասխան Պարոնյանը գործի էր դնում իր սրածայր մտքերն ու աֆորիզմները, ծաղրն ու հեզնանքը՝ երբեմն անցնելով չափավորության սահմանները, ինչը, թերևս, անխուսափելի էր: Ներկայացնենք նրա հայտնի աֆորիզմներից մեկը, որ գրվել է «Մեղու»-«Մամուլ» բանավեճի ամենաթեժ պահերին. «Կիկերոն՝ Պղատոնին ոճին հավնելով ըսած էր թե՛ եթե Արամազդ խոսիլ ուզեր՝ Պղատոնին ոճովը պիտի խոսեր: Կիկերոն եթե ողջ ըլլար՝ պիտի ըսեր, եթե Արամազդ հայիոյել ուզեր Մամուլի ոճովը պիտի խոսեր»¹⁴:

Բանավեճն ընդհատվեց «Մեղու»-ի փակվելու պատճառով: Այն տևեց շուրջ երկու տարի՝ պոլսահայ երգիծական մամուլը հարստացնելով նոր հետաքրքիր էջերով:

Л. Г. СИМОНЯН - Страница из истории полемики между константинопольскими армянскими изданиями сатиристического направления.- В статье рассматривается полемика между влиятельными изданиями “Мегу” (1856-74 гг.) и “Мамул” (1869-83 гг.) в 70-х годах 19-го века. Эта непримиримая и последовательная борьба велась между редакторами-сатириками А. Пароняном и Г. Айвазяном — с одной стороны и между изданиями в целом — с другой. Обстоятельный анализ архивных материалов показывает, что полемика между “Мегу” и “Мамул” постепенно выходила из собственных жанру границ, приобрела новые качества, выливаясь исключительно в личное противостояние между редакторами.

¹² «Շոշորդ խմբագիրը», «Մամուլ», Կ. Պոլիս, 1872, թիվ 250, էջ 349-350:

¹³ **Ա. Խառատյան**, Արևմտահայ երգիծական մամուլի պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1993, թիվ 4, էջ 65:

¹⁴ «Մամուլի լեզուն», «Մեղու», Կ. Պոլիս, 1873, 12 սեպտեմբերի, թիվ 170: